ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը սույն թվականի փետրվարի 1-ից սկսում է շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, իսպաներեն, պարսկերեն, իտալերեն), «Աշխարհագրություն», «Կենսաբանություն» առարկաներից միասնական (2011 թվականի բուհերի ընդունելության) քննությունների կազմակերպման գործընթացը:

Միասնական քննությանը մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ:

Շրջանավարտները (դիմորդները) դիմում-հայտ են լրացնում իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված ուսումնական հաստատությունում, որի մասին տեղեկություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել փաստացի բնակության վայրի մարզային (Երևանի քաղաքապետարանի) կրթության վարչություն:

Միասնական քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափի լուսանկար,
- անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը,
- ***«ՎՏԲ Հայաստան բանկ»***-*ում* Գնահատման և թեստավորման կենտրոնի ***160481037341*** հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի անդորրագիրը կցել դիմում-հայտին:

Միասնական քննության վճարից (1500 դրամ) ազատվում են հետևյալ դիմորդները՝

- պարտադիր ժամկետային ծառայությունից զորացրված անձինք,
- 1-ին և 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները,
- ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին համապատասխանաբար կցում են զինվորական գրքույկի պատճենը, հաշմանդամության տեղեկանքի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրված տեղեկանքների պատճենները, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Դիմում-հայտերի ընդունման վերջին ժամկետը 2011 թվականի մարտի 15-ն է:

«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Այն շրջանավարտները, որոնք բուհ ընդունվելու համար «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, իսպաներեն, պարսկերեն, իտալերեն), «Աշխարհագրություն», «Կենսաբանություն» առարկաներից հանձնելու են միասնական քննություն, դիմում-հայտը լրացնում են իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված հետևյալ ուսումնական հաստատություններում.

Երևան	Թիվ 66 միջն. դպրոց (Շենգավիթ)
	Թիվ 43 միջն. դպրոց (Էրեբունի, Նուբարաշեն)
	Թիվ 19 միջն. դպրոց (Կենտրոն, Նորք-Մարաշ)
	Թիվ 36 միջն. դպրոց (Արաբկիր)
	Թիվ 190 միջն. դպրոց (Մալաթիա-Սեբաստիա)
	Թիվ 62 միջն. դպրոց (Նոր Նորք)
	Թիվ 127 միջն. դպրոց (Քանաքեռ-Զեյթուն)
	Թիվ 118 միջն. դպրոց (Աջափնյակ, Դավթաշեն)
	Թիվ 171 միջն. դպրոց (Ավան, Առինջ)
Կոտայքի մարզ	Հրազդանի թիվ 8 միջն. դպրոց
	Աբովյանի թիվ 10 միջն. դպրոց
	Եղվարդի թիվ 1 միջն. դպրոց
	Նոր Հաճնի թիվ 2 միջն. դպրոց
	Բյուրեղավանի թիվ 1 միջն. դպրոց
	Չարենցավանի թիվ 1 միջն. դպրոց
Գեղարքունիքի մարզ	Գավառի թիվ 9 միջն. դպրոց
	Սևանի թիվ 7 միջն. դպրոց
	Մարտունու թիվ 2 միջն. դպրոց
	Վարդենիսի թիվ 1 միջն. դպրոց
	Ճամբարակի թիվ 1 միջն. դպրոց
Արագածոտնի մարզ	Աշտարակի թիվ 1 միջն. դպրոց
	Թալինի մաթ. հատուկ դպրոց
	Ապարանի թիվ 1 միջն. դպրոց
	Ծաղկահովիտի թիվ 1 միջն. դպրոց
Վայոց Ձորի մարզ	Եղեգնաձորի թիվ 3 միջն. դպրոց
	Ջերմուկի թիվ 2 միջն. դպրոց
	Վայքի թիվ 1 միջն. դպրոց
Արարատի մարզ	Արտաշատի թիվ 1 միջն. դպրոց
	Արարատի թիվ 1 միջն. դպրոց
	Մասիսի թիվ 1 միջն. դպրոց

Սյունիքի մարզ	Կապանի թիվ 9 միջն. դպրոց
	Մեղրու թիվ 1 միջն. դպրոց
	Գորիսի թիվ 3 միջն. դպրոց
	Սիսիանի թիվ 3 միջն. դպրոց
Լոռու մարզ	Վանաձորի թիվ 5 միջն. դպրոց
	Ալավերդու թիվ 2 միջն. դպրոց
	Սպիտակի թիվ 2 միջն. դպրոց
	Ստեփանավանի թիվ 3 միջն. դպրոց
	Տաշիրի թիվ 1 միջն. դպրոց
Շիրակի մարզ	Գյումրու թիվ 3 միջն. դպրոց
	Արթիկի թիվ 3 միջն. դպրոց
	Մարալիկի թիվ 1 միջն. դպրոց
	Ախուրյանի թիվ 2 միջն. դպրոց
	Աշոցքի միջն. դպրոց
	Ամասիայի միջն. դպրոց
Արմավիրի մարզ	Արմավիրի թիվ 1 միջն. դպրոց
	Վաղարշապատի թիվ 2 միջն. դպրոց
	Գյուղ Մյասնիկյանի միջն. դպրոց
Տավուշի մարզ	Իջևանի թիվ 5 միջն. դպրոց
	Դիլիջանի թիվ 1 միջն. դպրոց
	Նոյեմբերյանի թիվ 1 միջն. դպրոց
	Բերդի թիվ 4 միջն. դպրոց